ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 հոկտեմբերի 2011 թվականի թիվ 85 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ <<ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 2002թ մարտի 16-ի հրամանագրի 1.5 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929 որոշումը

կարգադրում եմ.

1. Տնօրենների մրցույթը կազմակերպել <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319 որոշման հիման վրա:
2. Ներկայացնել հաստատման հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմերը:
3. Կարգադրության կատարման ապահովումը հանձնարարել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Փաշինյանին:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Լ.Սարգսյանին:

Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

19 հոկտեմբերի 2011թ.
ք.Իջևան